

**ՆԱՐԵԿԱՑԻԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄԱՐԱԶՅԱՆ, ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ
«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ‘Ո՛Վ Է ԴԱ’-Ի» ԵՐԿԸ.
ԵՐԵՎԱՆ, ՆԱԻՐԻ, 2019**

ՌՈՔԵՐՏԱ ԷՐՈՒԻՆ

Ս. Ներսէս Լնծայարան

Այս օրերուն ամէնքս մտազբաղ ենք, հազիւ ժամանակ ունինք մեր անձնական հետազոտութիւններն ու գործերը հասցնելու: Իսկ այսպիսի շրջան մը ապրելու բախտը ունինք, երբ ամէն ամիս, եթէ ոչ ամէն շաբաթ, նոր եւ ընտիր եւ արժանի երկ մը լոյս կը տեսնէ: Արդէն գիտաժողովիս ելոյթներուն ընթացքին, քանի մը գեղեցիկ նոր հրատարակուելիքներու մասին լսեցինք, որոնց մօտակայ լոյս տեսնելուն կը սպասենք ակնդէտ: Ինչպէ՞ս կրնանք հոգեւոր ու մտաւոր այս ամէն հարուստութենէն օգտուիլ:

Արուսյակ Թամրազյանի այս բացառիկ հատորի պարագային՝ ծայրէ ծայր կարդալու ժամանակ տրամադրելը ոչ միայն կ'արժէ, այլ անհրաժեշտ է մանաւանդ ինծի պէս անձերու համար, որոնք կը հետաքրքրուին մեկնողական երկերու յարաբերական պատմութեամբ:

Ուրեմն, խորապէս շնորհակալ ենք, ես եւ նմաններս, հատորիս յարգարժան հեղինակին, որ իր ուսումնասիրութեան իբրեւ նիւթ ընտրած է Նարեկացու նուազ ծանօթ մեկնաբանական երկը, նուիրուած Յոբի 38-39րդ գլուխներու մեկնութեանը, որու ընթերցման բազմաթիւ խոչընդոտներու պատճառով, մինչեւ այժմ պէտք եղած ուսումնասիրութիւնը չի արժանացած:

Շատ կարեւորութիւն ունի «Ո՛վ է դա»-ի ընթերցուածը հայաստանեայց եկեղեցւոյ ծիսական աւանդութեան մէջ, պատկանելով այն շարք ընթերցուածներու, որոնցմով հոգեպէս կը պատրաստուէին հաւատացեալները Զատիկի սուրբ խորհուրդը դիմաւորելու, ու մանաւանդ Զատիկի նախերգան մկրտութեան ծէսին: Դարերու ընթացքին քանիցս մեկնաբանուած է «Ո՛վ է դա»-ն, եւ այս մեկնութիւնները եւս արժանի կերպով ներկայացուած են հատորիս մէջ, դիւրացնելու համար բաղդատումը մեկնիչներու մօտեցումներու միջեւ:

Հատորիս ներածական երկու գլուխներովը կը պատրաստէ հեղինակը կարդացողին միտքը բնագրին մօտենալու: Այս երկու գլուխներու մէջ կը ներկայացնէ.

1) Նարեկացիի պատկերաւոր ու խորհրդական ընթերցումը «բանաւոր

զոհաբերութիւն» մատուցանելու մասին, իբր հոգեւոր պարտականութիւն «մարդ-բնագիր»-ին,

2) Յոբի գրքի խաղցած դերը Նարեկացու Մատեան Աղօթից-ի մէջ, ինչպէս նաեւ իր շարականներու եւ գանձ-տաղերու մէջ,

3) գլուխ 38-39-ի իմաստը իբրեւ Յոբի գրքի գագաթնակէտը, այսինքն՝ իբրեւ Յոբի եւ իր ընկերներու միջեւ Աստուծոյ արդարութեան մասին վարած խօսակցութիւններու երկնային պատասխանը:

Ներածութեանը կը հետեւի հարիւր էջնոց ակնարկ մը բոլոր հայերէնով հասած «ՄՎ է դա»-ի մեկնողական երկերուն, ներառած թարգմանութեամբ հասած գործերուն Կիրեղ Երուսաղէմացու եւ Յովհաննէս Ոսկեբերանի նման վաղ շրջանի ոչ հայ հեղինակներու: Յիշատակուած են նաեւ Յոբի վերաբերեալ լուծմունքներ եւ համառօտութիւններ, ինչպէս նաեւ անանուն մեկնութիւն մը, զորս քննարկելով, հեղինակը բոլորին միջեւ յարաբերական կապերը կը շեշտէ:

Հատորին երկրորդ բաժինը նուիրուած է Նարեկացու մեկնութեան առանձնական վերլուծական ամփոփման՝ համար առ համար ներկայացուած, մանրամասն քննարկելով միանգամայն Նարեկացու Երգ Երգոցի մեկնութեան հետ առնչութիւնները, եւ ուշադրութիւն հրաւիրելով մասնաւորապէս ձիոյ եւ անգղի ձագերու նման նշանակական պատկերացումերու վրայ: Կը շօշափուին մանաւանդ խորհրդական մոտիֆ-թեմաներ, ինչպէս՝ բաժակ եւ արիւն, զոհաբերութիւն, եւ ճաշակում:

Վերջապէս, հատորին չորրորդ մասը կը բովանդակէ «ՄՎ է դա»-ի Մեկնութեան բնագրին շատ բծախնդրութեամբ կատարած վերականգնումը Վենետիկի 339 ձեռագրի հիման վրայ: Նկատելով մեկնութեան մինչ այս մատչելի բնագրին սարսափելի աղաւաղուած վիճակը, մեծապէս կը գնահատենք հեղինակին զայն վերականգնելու այս փորձը, որով շատ մը ընթերցողական հարցեր վերջապէս իրենց լուծումը կը գտնեն:

Ինչպէս արդէն նշեցինք, բնագիրը կարելիութեան սահմաններէ ներս վերականգնանացնելու գործին, չէ լքած հեղինակը Նարեկացիէն յետոյ յօրինուած միւս մեկնութիւնները, այլ յօգնութիւն կանչած է Վանական Վարդապետի շատ ծանօթ գործը, առընթեր դնելով Նարեկացիէն առաջ Համամ Արեւելցիի եւ Եղիշէ վարդապետի անունով հասած աւելի կարճ մեկնութիւնները, Կիրեղ Երուսաղիմացու «Կոչումն ընծայութեան»-ի 9րդ ճառը, եւ Յովհան Ոսկեբերանի մեկնութիւնը: Վանականի, Համամի Բ-վարիանդի, եւ ուրիշ աւելի մանր անանուն կամ կասկածելի վերագրումով գործերու չհրատարակուած բնագիրները յաւելուածներու մէջ տեղաւորելով՝ հեղինակը մեծապէս օժանդակած է յետագայ հետազոտողներու աշխատանքը:

Ի վերջաւորութեան այս սակաւ խօսքին, կ'ուզեմ շեշտել որ քաջալերանքի արժանի են միշտ այն գիտնական աշխատակիցները որոնք, Արուսյակ

Թամրազյանի նման, կը հրաժարին աւելի պարզ ու քաջածանօթ գործերով զբաղուելու ասպարէզէն, մօտենալու համար «ՄՎ է դա»-ի պէս խնդրաշատ բնագիրներու, նպատակ ունենալով ուրիշներու աւելի սահմանափակ ուսումնասիրութիւնները յառաջ տանելու եւ լայնցնելու:

Պիտի փափաքէի նաեւ խորին երախտագիտութիւն յայտնել Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանի տնօրէնութեանն ու հրատարակչական բաժնին, որ իրենց անխոնջ ջանքերով անգամ մը եւս արժանի գործ մը ընծայած են գիտական աշխարհին: Շնորհակալութեան ձօն նաեւ ուսումնասիրութեան շատ սիրելի եւ գնահատելի հեղինակին, Արուսեակ Թամրազյանին, որու արժէքաւոր գործերը զինք կը յայտարարեն ոչ միայն իբրեւ ընտիր գիտնական, այլ նաեւ՝ մեծատաղանդ գիտնականներու արժանի շառաւիղ ու ժառանգորդ: